բազմապատիկ յեղաշրջումներն որոց ենթակայ են յարաժամ, կը պատրաստեն այն վախճանն յամր այլ ստոյգ։ Են այսօր, ոչ եւս պիտի լինին վաղիւ։ Քանզի ինչ որ կը նշանակեն «այսօր» և «վաղիւ» մարդկային կենաց մէջ, նոյնը կը նշանակեն տիեզերաց կենաց մէջ, նոյնքան արագահաս նոյնքան վաղանցուկ։

Երկիրս իւր Թաւալգլոր, շտապալից ընթացքի միջոցին Թերեւս ուրիշ երկնային մարմնոյ մը հանդիպի եւ իր ընդհարմամբ խորտակի, փոշիանայ ի վայրկեան ժամանակի։ Անկարելի չէ այս, այլ ոչ հաւանական հոն՝ ուր ոչ Թէ անխուսելի յանկարծադէպ արկածներ, այլ կը տիրեն գերիմաստ նախախնամ օրէնքներ։

Աւելի հաւանական է որ բնական մահուամբ մեռնի երկիրս. ծերութեամբ, այսինքն իւր կենսական նիւթոց սպառումովը. և կամ ցրտացմամբ արեգական, ուստի իր անհրաժեշտ ջերմութիւնն կընդունի հանապազ։ Երկուքն ալ հաւանական կրնամք ըսել նոյն իսկ անխուսափելի պատահարներ են իրաց բնական ընթացքէն դատելով։ Եր...

... պիտի ձեռնարկեն բեւեռային խուզարկութեանց, սառոյցին տակ գտնելու համար տեղը Փարիզի, Լիօնի, Պօրտոյի, Մարսէյլի։ Ծովափունքն փոխուած են, և երկրիս աշխարհագրական քարտէսն կերպարանափոխ եղած։ Ո՛չ եւս պիտի ապրին մարդիկ. ո՛չ եւս պիտի շնչեն. ի բաց առեալ հասարակածային երկրաց մէջ. մինչեւ այն օրն յորում վերջին ցեղն պիտի գայ բազմիլ ցուրտէն ու սովէն արդէն մեռած. վերջին ծովուն ափանց վրայ, ճառագայթից մէջ՝ տժգոյն արեւու մը, որ այնուհետեւ պիտի լուսաւորէ յատուկ միայն գնայուն գերեզման մը, որ կը Թաւալի անօգուտ լուսոյ մը եւ անբեղմնաւոր ջերմութեան մը շուրջ։ Ցուրտէն ըմբռնեալ և մարդկային վերջին ընտանեաց հպած է մահուան մատն. և ընդհուպ իւր ոսկերոտիքն պիտի Թաղուին յաւիտենական սառնամանեաց պատանքին տակ։

«Բնութեան պատմագիրն պիտի կարենայ գրել ապագային մէջ. — աստ հանգչի ամբողջ մարդկային ցեղն աշխարհի մը, որ կ՚ապրէր երբեմն։ Աստ հանգչին փառաւորութեան երազներն, բոլոր մեծադղորդ ...

... րատուութեանց գումարն բարձրացած պիտի տեսնեմք 39,726 ղրուշի։

69,660 ղրուշի գումարը՝ արդիւնք է երկուց կտակաց, որոյ 10,800 ղրուշը՝ հանգուցեալ Ալլահվէրտեան Տիկին Տիրուհւոյ կողմանէ Թողուած է Անկելանոցիս, իսկ միացածը յԱնդլիա վախճանեալ Տիկին Պէտմերեա Օլիվօյի կողմանէ։

Այլ և այլ հասութից մէջ կը տեսնենք բարեյիշատակ հանգուցեալ Մըսըրլեան Անտոն պէյի, Անկելանոցիս՝ և անոր մէջի ծրիավարժ դպրոցին՝ կտակած 3,000 օսմ. ոսկւոյ գումարին վեցամսեայ տոկոսն 5,508 ղրուշ, սկսեալ ի 14 փետրուարէ 1891 մինչեւ ցի 14 օգոստոս 1891։

Անցնինք ծախուց կողմը.

Անցեալ տարւոյն ծախուց սհմանին գումարն էր (առանց հաշուելու ի վերջ դեկտեմբերի չտեսմարանը գտնուած պարէնի արժէք 8,561 ղրուշը), 295,030.20 ղրուշ, յորմէ հանելով 2,913.10 ղրուշ ...

## Ս. ՅԱԿՈԲԱՅ

## ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

## ԱԶԴ

## ԳԱՍՊԱՐԵԱՆ

## ՓԱՓԿ ՍԵՐԱՄԵՐԻ

## ԱՐՈՒԵՍՏ ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱՒՈՐՈՒԹԵԱՆ

